ՊԱՏՄԱՆԹ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 Մէճ.
» » Գաւառաց » 12 »
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 5 »
» » Գաւառաց » 6 »
Օտար երկիրներու » 21/2 Լիրա

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրշ., երկու անգամի համար 2 ղրշ. է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լինի։

Մէնակ մի թիւ 40 փարա արժէ։

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՏՄԱՆԹ

Դուրս գնացած լրագրաց ճանրու ծախքը Խմբագրութեան վրայ է։

Լրագրոյն վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն Խմբագիր—Տնօրէնութեան պիտի ուղղուի, Կ. Պոլիս Պահչէ-Գաբու Ճէլալ պէյ խան թիւ 31 Մատիսի գրասենեակը։

Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

Զապուած նամակ, յօդուած, եւ ես չեն տրուիր։

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՊՈԼԻՍ 4 ԱՊՐԻԼ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—o—

Այս տողերս հասած հեռագիրներ

Նիս Նորք 15 ապրիլ։

Ի Նպատակ Բիսոյ արիածելոց բացուած հանգանակութիւնն երէկ իրիկուն 5536 ոսկիի կը հասնէր, յորմէ 1000 լիրա Կ. Պոլիս ղրկուեցաւ։

Աթէնք 15 ապրիլ

Նախարարաց խորհուրդն որոշեց թագաւորին սատարդրութեան ներկայել այսօր՝ զինուորական ծառայութենէ առժամապէս ազատ մնացեալ մարդերն ի զէն կոչելու հրամանագիր մի։

Աթէնքի լրագրերէն շատեր՝ կը պարտաւեն Հելլենական կառավարութեան տուած պատասխանը տէրութեանց ծանուցագրին՝ սահմանագլխոց խնդրոյն նկատմամբ։

Միաբերան յոյժ գրգռեալ են։

Տէրութեանց դեսպաններեր նկատելով որ իրենց ծանուցագրին տրուած պատասխանն յստակ չէ, և անբաւական է, աւելի բացորոշ պատասխան մի կը խնդրեն Պ. Քումունտուրոսէն։

Կը հաւատան թէ երեսփոխանաց ժողովն անցապատ պիտի դումարի, որպէս զի վերջին խօսքն ասէ այս խնդրոյս մէջ։

Լոնտրա 16 ապրիլ

Լորտ Պիքոնսֆիլտի ապաքինումը կը շարունակէ։ Մխորժակը կատարեալ պէս վերադարձաւ և ամեն ուղած ուտելիքը կրնայ առնուլ։ Ուժն ալ արագապէս կը վերադառնայ և իւր բժիշկները գերազանցապէս լաւ ճանրու մէջ կը համարին զայն։

Բեղրասուրկ 16 ապրիլ։

Լորտ Տիֆերին երէկ իրիկուն մեկնեցաւ ի Լոնտրա, ուստից ալ մօտ օրէն Կ. Պոլիս պիտի երթայ։

Բեղրասուրկ 16 ապրիլ։

Ի մահ դատապարտեալ արքայասպաններուն հինգն երէկ կախուեցան։ Ռիսաքոֆի քաջութիւնը պակեցաւ կախաղանին առջև, և մարեցաւ։

Վերջին թղթաբերով եկած Եւրոպական լրագրաց մէջ հետաքրքրական լուրերը կը տեսնուին։

Ռուսիոյ մէջ համալսարանական յուզմունքն յայտնապէս կը զօրանայ։ Ալէքսանդր Գ. կայսեր վաղեմի դասախօսակ Պ. Բօպէտոնոսցեւի նախաձեռնութեամբ ուղերձ մի կ'ստորագրուի սահմանադրութիւն հրատարակելու դէմ։ Սլաւական ընկերութեան դեր-Նախագահ Պ. Աքսակոֆ՝ կայսեր բացարձակ իշխանութեան հաստատ պահուիլը կը պահանջէ յայտնապէս, հետեւաբար նախարարութեան մէջ այս մտօք արմատական փոփոխութիւն մի կ'սպասուի։ Լորիս Մելիքոֆ կոմսը Կաւկասիոյ ընդհանուր կառավարիչ պիտի անուանի, և նորա տեղ ներքին գործոց նախարար պիտի լինի Պ. Բոլովձով։ Պ. Բ. Շուվալոֆ ալ Բեղրասուրկի ընդհանուր կառավարիչ պիտի անուանի անսահման իշխանութեամբ։

Ռուսիոյ արքունեաց ծախքը 17 միլիոն ռուպլիէն 7 միլիոն ռուպլիի իջաւ։

Ներքին գործոց նախարարութիւնն 8 ամիս դադրեցուց Սմոլէնսքէր-Վէսթնիք անուն լրագիրն, և Բորիսաոք լրագրին ալ հրապարակի վրայ վաճառումն արգիլեց։

Կայսրը վերջին պատերազմին ժամանակ Սերպիոյ կառավարութեան Ռուսիայէն փոխ առած 900,000 ռուպլին չնորհեց Սերպիոյ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—o—

ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Աթէնքէն եկած վերջին հեռագիրք կը ծանուցանեն թէ Հելլենական կառավարութիւնն իրական երաշխաւորութիւններ կը պահանջէ միշտ Թուրքիոյ թողուած տերերուն անյապաղ յանձնման համար, վախնալով որ Ցուլչինեցոյի դրժումարութիւններն իրեն դէմ ալ կ'ելնեն։ Կը պահանջէ որ տէրութիւնք արտօնութիւն տան Հելլենական կառավարութեան, որպէս զի առաջնակարգ դահմանագիծն ընդունելուն պէս՝ Թեսալիա մտնէ և գրաւոր կէտերը զօրքով գրաւէ, և ապա սահմանագլխին նոր դիծերը ճշգիւ որոշուին։

Տէրութիւնց դեսպաններն այս կարեւոր պայմանն իրենց կառավարութեանց հաղորդելով հրաման խնդրեցին, և կասուի թէ հինգշաբթի օրն եկած հրահանգներն այս կէտին կը վերաբերին։

Դեսպանք հինգշաբթի օրն երկու անգամ նիստ ըրին, առաւօտուն իտալական դեսպանատունն, իրիկունը Ֆրանսական դեսպանատունը։ Թուրքիոյ մեծ տէրութեանց կողմէ Հելլենական կառավարութեան հրահանգի առաջարկին վերաբերեալ հաւաքական ծանուցագրին պատասխանը։

Պէրլինի դեսպանախորհրդին որոշած Թուրքս—Հելլենական սահմանագիծը չկրնալով գործադրութիւն ստանալ, տէրութիւնք նորա տեղ ուրիշ սահմանագիծ մի որոշեցին ի Կ. Պոլիս իրենց դեսպանաց ձեռօք։ Այս նոր սահմանագիծը կը պարունակէ Լարիսա, Թիրնովոյ և Թրհալա քաղաքները Թեսալիոյ մէջ, Արթա քաղաքն Եպիրոսի մէջ, և Բունթա։ Բրէվեզայի բերդը պիտի քակուի։ Ամպրասիքի ծոցին մուտքը բաց պիտի լինի ամեն առևտրական նաւուց։

Տէրութիւնք յանձն կառնուն՝ թողուած երկիրներուն գրաւումը դիւրացնել Յունաստանի, եթէ Յունաստան ամենակարճ միջոցի մէջ ընդունի առաջարկեալ սահմանագիծն և զգուշանայ իւր վերայ առնուլ պատերազմին պատասխանատուութիւնն։ Ապա թէ ոչ, Յունաստան առանձին պիտի մնայ և պատասխանատուութեան բոլոր ծանրութիւնն իւր վերայ պիտի իյնայ։

Յունաստան կը հրաւիրուի միանգամայն՝ իրեն թողուած երկիրները բնակող Օսմանցւոց սեպհականութիւններն և կրօնական ու քաղաքային ազատութիւնն ապահովել։

Ազատս Հալաս կը հաւատայ թէ տէրութիւնք պիտի ջանան յետոյ, երբոր իրենց առաջարկն Յունաստանէն ընդունուի, Եպիրոսի համար մի քանի վարչական բարենորոգումնք ստանալ Դուռնէն, որպէս զի դրդռեալ Յոյն ժողովրդոց յուզման և պատերազմասիրութեան վերջին պատճառանքն ալ առնուի իրենց ձեռքէն։

ՓՈՒՐԴԱՍՏԱՆ

Այս տուր Մէսէնճրի մէջ կը կարդամք։

«Բուրդաստանէն եկած վերջին լուրերը դոհացուցիչ չեն։ Շէյխ Ուպէյտուլլահ Կ. Պոլիս դալու հրաւէրին չանսաց, և այս ալ զարմանալի չէ, մանաւանդ երբ նկատուի թէ Շէյխին անշուշտ գիտէ այն պահանջումը զոր Պարսիկ կառավարութիւնն իւր նկատմամբ ըրած է։ Դանէն։ Բայց միւս կողմէն Շէյխին որոշումն մ'ըրած է որ իրեն դէմ Պարսիկ կառավարութեան թշնամութիւնն ևս քան զևս պիտի աւելցնէ։ Յայտարարութիւն մի հանած է հրաւիրելով բոլոր Քուրդ գլխաւորն որ նոր պատերազմի մի պատրաստութիւն, այնպէս որ յառաջիկայ ամառուան ամիսներուն մէջ հաւանականաբար պիտի կրկնուին այն սարսափելի տեսարաններն, որք անցեալ աշնան միջոցին տեղի ունեցան արեւմտեան Պարսկաստանի մէջ։

ԹՈՒՆՈՒԶԻ ԽՆԴԻՐ

Այս տուր թուրք լրագիրք նոր լուրեր չեն տար Թունուզի խնդրոյն վրայ։ Մէսէնճրը երէկուան թուով կը ծանուցանէր թէ Բ. Դուռը տակաւին իւր ծանուցագիրը չէ ղրկած այդ նկատմամբ։ Այս պաշտօնագրոյն իմանալն աւելի կարեւոր կ'ելնէր կը թուի քան որչափ չէր կարծուեր յառաջ։ Բ. Դուռը Թունուզի երկրին վրայ Սուլթանին վերհսկողական իրաւունքները կը պաշտպանէ, և հետեւաբար կանխաւ կը բողոքէ Ֆրանսական զօրոյ Թունուզ մտնելուն դէմ, ըստ որումի այդպիսի ընթացք հակառակ կը լինի միջազգային օրինաց։ Թունուզի փաշան՝ ապատամբ Արաբները զսպելու համար պէտք եղած միջոցները լիովին ունի։

Լոնտրայէն եկած հեռագիր մի կը ծանուցանէ թէ Ֆրանսայի դեսպան Լեռ Օրլանդ Լիոնի մէջ պահովիչ յայտարարութիւններ ըրեր է Անգլիոյ կառավարութեան՝ Թունուզի սահմանագլխի վրայ Ֆրանսայի ձեռք առնելիք զինուորական միջոցներու մասին։

Բեղրասուրկի Ֆրանսական դեսպան Շանզի զօրավարը Փարիզ կոչուելով՝ մեկնեցաւ Բեղրասուրկէն։ Արդեօք Թունուզի սահմանագլխի Արաբաց դէմ ղրկուած զօրաց հրամանատարը պիտի անուանի։ Հաւանական չթուիր այս։ բայց նորա այսպէս անակնկալ կերպիւ և շտապով Փարիզ վերադառնալն այլ և այլ մեկնութեանց առիթ կը տայ։

ՔԻՈՍ

Ընդ բարձր հովանաւորութեամբ Վեհ. Սուլթանին և ընդ հովանաւորութեամբ մայրաքաղաքիս բոլոր դեսպանաց, Քիոսի դժբաղդ զոհերուն օգնելու համար կեդրոնական ընդհանուր Մասնաժողով մի կազմուեցաւ, որուն անդամ են մայրաքաղաքիս բոլոր Պանքաներուն տնօրէններն, ամեն ազգէ բնիկ և օտարազգի գլխաւոր վաճառականք և սեղանաւորք, որոց մէջ կը գտնուին նաև մեր ազգայիններէն Մեծ. Էսայեան Յովհաննէս, Կիւլպէնկեան Սերոբէ, Մաքսուտ Սեպուհ, Կիւմիւշկիրան և Բէքմէզեան Կոմիտաս էֆէնտիներն։

Այն մեծ մասնաժողովին պատուակալ նախագահ է Կ. Պոլսոյ Յունաց Ս. Պատրիարքը։

Լոնտրայի քաղաքագիտութեան ապարանքին մէջ ի նպաստ Քիոսցւոց բացուած հանգանակութեան առաջին ցուցակին գումարը 11,414 լիրայի հասած է, որոյ 5000 լիրան Ռուսիի գերդաստանը միայն ըստորագրուած է։

Փարիզի մէջ ի նպաստ Քիոսցւոց եղած հանգանակութեան առաջին գումարն է 100,000 ֆրանք, որոյ 25,000ն Օսմ. Պանքան, 10,000ը Ռաշիլտ եղբարք, 10,000ը Պանք ազ Քոնսթանթինոպլ, 15,000ը Պ. Ժ. Գորոնիոյ, և մնացեալն այլ և այլ դրամական հաստատութիւնք տուած են։

Արշիպեղագոսի կղզեաց մէջ հաւաք կը գտնէ այն կարծիքը թէ երկրաբանական մեծ յեղաշրջումի մի կատարուելու վերայ է, որուն նախաշաւիղն է Քիոսի երկրաշարժը։

Այս կարծիքը մեծ երկիւղ ձգելով կղզեաց բնակիչներուն վերայ, կարողութիւն ունեցող ընտանիքներն իշխիր և այլ ցամաք երկիրներ գաղթելու կը պատրաստուին։

Հինգշաբթի օրը Պաթում շոգենաւն 800 հոգի բերաւ Քիոսէն։

Դաւն գանգատներ կը գան Քիոսի կառավարիչ Սատրգ փաշայի և նորա սատրդասեալ պաշտօնէից դէմ, որոց տակաւութիւնն ու թալանութիւնն այդ թշուառ կղզւոյն վերայ եկած պատուհասն ևս առաւել ծանրացուցեր են։ Զմիւռնիայէն առ Մէսէնճրը ուղղեալ նամակի մի նայելով, 24 ժամ թող չեն տուեր որ մասնաւոր հեռագիրներ ղրկուէին Զմիւռնիա, և այս պատճառաւ նպաստներու հոսանքին ուշացեր է ամիսղմի մի օր։ Աւելին պէտք էր գործաւորներ և զինուորներ ղրկել փրատակաց տակէն մարդ ազատելու համար, և եթէ այս գործողութիւնք աւելի շուտ կատարուէին, որ կարելի էր, տակաւին հարիւրաւոր մարդիկ կրնային ազատիլ մահուան ճիրաններէն։

ԱԼՊԱՆԻԱ

Թուրք լրագրաց վերայ սրտի և մտաց միութեան անգորութիւնը կը տեսնուի։ Դարձեալ նեամանիսցիներն սիրային լինի թէ հարաւային, Քնաւ չեն հաւատար թէ տէրութեան Արնաւուտ հպատակներն, որոց հաւատարմութիւնն առած դարձած է, Բ. Դրան դէմ ապատամբելու դատափարն ունեցած լինին, կամ կարենան ունենալ այսուհետեւ։ Բայց, ինչպէս կը հաստատէ թերճէմանը Հադիդաթ, կռիւներն անպակաս եղած են միշտ Ալպանիոյ մէջ, մինչեւ իսկ Օսմանեան զօրաց և Ալպանիացւոց միջև, բայց այս տեսակ «ընչին» դէպքերու ապատամբութեան անուն չկրնար տրուիլ։ Ուստի, Տէպայի թղթակիցներուն գրածին կարեւորութիւն պէտք չէ տալ։

Մայրաքաղաքս գտնուող Ալպանիացւոց գլխաւորները նախընթաց գիշեր ի խորհուրդ գումարեցան, հաւանականաբար իրենց երկրէն եկած ծանրակշիռ լրոց պատճառաւ։

Կայսերական խաստոյի զօրաց հրամանատար Բէսիֆ փաշան Վեհ. Սուլթանին կողմէ Բեղրասուրկի պիտի երթայ Ռուսաց Ալէքսանդր Գ. կայսեր գահակալութիւնը շնորհաւորելու։

Ն. Վանմանթիւն յառաջիկայ երկուշաբթի օրը կը մեկնի մայրաքաղաքէս՝ երկու քաղաքային պաշտօնատարաց և մի քանի սպայից հետ։

Զրոյց կայ թէ մայրաքաղաքիս Ռուսական դեսպանատան Ա. Թարգման Պ. Օնու յատուկ պաշտօնով Բեղրասուրկ պիտի երթայ երկուշաբթի օրը։

Ադրիանուպոլսոյ Օսմ. զօրաբանակին մէջ Թիֆոյ ճարակելով՝ շատ մարդ կը մեռնի եղեր։

Դուսճուգէն առ Թէրճէմանի Հաղիգաթ ուղղեալ նամակ մի կը հաստատէ նոյն լրագրոյն մէջ հրատարակուած տեղեկութիւնները թէ Պուլգարք անլուր բռնութիւններ ի գործ կը դնեն եղեր մահմետականաց վրայ։ Կը պատմէ թէ գիշերները Պուլգարք խրատնոց տունները կոխելով՝ կանանց և աղջկանց պատիւը կը բռնաբարեն, դայլ կը յափշտակեն և ի հարկին կը ծեծեն ու կը վիրաւորեն։ Իսլամ բընակիչներէն շատերու, իրրև զգուշական միջոց չուանի մի միջոցաւ յարաբերութիւն հաստատեր են Դրացի Իսլամ տուներու հետ։ Զուանին ծայրը զանգակ մի կախուած է, և երբոր Պուլգարք ասն մի վերայ յարձակին, նեղը մընացած ընտանիքը չուանը քաշելով ձայն կը տայ իւր դրացւոյն, նա ալ ուրիշներուն։ Ամեն թաղի մէջ կարգաւ Իսլամ ընտանիք մի արթուն կը կենայ եղեր, որպէս զի, երբ դրացիներէն միոյն վրայ դիշերային յարձակում լինի, օգնութեան հասնելու համար միւս դրացիներն արթնցնէ, եւ։— եթէ այդպէս է այս։ անտարակոյս շատ հանճարեղ կարգադրութիւն մ'է, և ուրիշ նեղը մնացած ժողովուրդք ալ, եթէ կան, կրնան Ռուսճուգի հարատահարեալ Իսլամ ժողովրդեան օրինակին հետեւիլ։

Արքանդր փաշա անուն Յոն մի, որոյ համար ամբաստանութիւն եղած էր թէ կառավարութեան դէմ խռովարար խօսքեր ըրած է, երեքշաբթի օրն իւսկիւտարի Պատժական ատենին առջեւ դատուելով՝ միամեայ բանտարկութեան դատապարտեցաւ։

Ամբաստանելոյն փաստաբան Համոի պէյ վերաքննութիւն պահանջեց այս դատավճռոյն։

Անցեալներն Իւսկիւտարի մէջ դրամանենգութեան յանցանքը եղած Ապրտուսան Ի Լօվէս անուն Հրեան Պատրիարքարանէն Ալի 15 ական տարի շղթայակապ աշխատութեան դատապարտեցան։

Մայրաքաղաքիս Ուզուն Զարշիի փողոցին մէջ թուրք ատարաւաճառ մ'այս առաւօտ իւր խանութը բանալով՝ կը տեսնէ որ երկաթեայ դրամարկղը կտրելով բացուած, և մէջը գտնուած դրամն՝ ինչպէս նաև ուրիշ թանկագին վաճառքներ գողցուած էին։ Գողը կամ գողերը պատուհանէն ներս մտած կը կարծուին։

Երէկ ժամը հինգին միջոցներն Էյուպի մօտ Տէֆթէրտարի թաղն հրդեհ պատահելով մեծ ապարանքի մի խոհարանն այրեցաւ։

Այս գիշեր ալ Ղալաթիա Բոնթայի փողոցին մէջ հրդեհ ծագելով խանութի մ'այրեցաւ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

—o—

Պատրիարքարանէն առ Բ. Դուռն մատուցեալ 21 խնդրոյց տեղեկագիրը Բ. Դռնէն նկատողութեան առնուած լինելով, նոցա վերաբերեալ ինչ ինչ թուղթեր խնդրուեցան այս շաբթու Պատրիարքարանէն, և ի մասնաւորի Վանայ ընդհանուր դատախազին ընդդէմ Վանայ Հայոց առաջնորդարանին հրատարակած գրութիւններն, որք մայրաքաղաքիս Թուրք լրագրաց մէջ տեսնուեցան, և որք Վանայ Հայոց առաջնորդարանն ամբաստանած էին իբրև սուտ և անհիմն իրողութիւններ տեղեկագրող։

Սեբաստիոյ զերեզմանատան խնդրոյն կարգադրութեան համար կազմեալ խառն յանձնախումբն երեկ Յունաց Պատրիարքարանը գումարելով՝ պատրաստեալ տեղեկագիրը քննեց և մի քանի բարեփոխութիւն ընելով ստորագրեց երկու օրինակ, մին Յունաց Ս. Պատրիարքին, միւսն ալ Հայոց Ս. Պատրիարքին մատուցանելու համար։

ԲԱՂԱՔԱԿԱՆ

Հեռագիրը կը ծանուցանէ թէ Յունաստան հաւանութիւն կը տայ տէրութեանց առաջարկն ընդունելու, սա պայմաններով միայն որ խոստացեալ հողերուն խաղաղօրէն և առանց արիւնհեղութեան սեպհականութիւնն ապահովի, և նոր գիծէն դուրս մնացած Յունաց վիճակը բարւոքի, կամ ինչպէս ոմանք կ'ասեն, Արեւելեան—Ռումելիի նըման ինքնօրինութիւն շնորհուի։ Յունաստան կ'երկնչի որ Ցուլլինեռի համար եղած երկարաձգումները ներկայ պարագայից մէջ եւս չվերանորոգին, և ասոր համար պայմաններ կ'առաջարկէ, որք ընդդիրը մի և նոյն վիճակի մէջ կը թողուն։ Եթէ պայմաններն ընդունուին, խնդիրը կրնայ լուծուիլ, սակայն առ այժմ հաշտութեան թմբուկը զարնել կանխահաս է, մանաւանդ որ նոր խնդիրներ ևս հորիզոնին վրայ մութ կէտեր կը ներկայեն։

Փարիզէն առնուած հեռագիր մի կը ծանուցանէ թէ 15,000 զինեալ Ալպանիացիք դէպ ի Շքոտրա կը քալեն։ Ալպանիացիք երկրին կառավարութիւնը գրեթէ իրենց ձեռք ուռած են եղեր։ Իւսքիւպի մէջ մեռասան գլխաւոր Ալպանիացիք ձերբակալուելով Սելանիկ զըրկուեցան, ուր մինչև այսօր բանտարկեալ կը մնան։ Բրիզրինի վրայ զօրք կը ղրկուի եղեր անդ գանըւող գլուխներն ևս ձերբակալելու համար։ Զորս Ալպանիական գաւառները միացնելու և տեղական ինքնօրինութիւն տալու խնդիրը չէ ընդունուած։ Վերջապէս Ալպանիա բաւական չիրմեալ կ'երեւի, թէպէտ և լսուած ամեն զրոյցները կատարելապէս ստոյգ չեն կրնար համարուիլ։ Սակայն քանի մ'ամիս առաջ մայրաքաղաքս բերուած և պատերազմի պաշտօնատունը բանտարկուած Հոտոյ Պէյ, որ օձիկ հիւանդութեան ենթակայ եղած է, և Համաւաւոր Առանձնարանը մուտքիւնը սրբութեան հոտ չեն բուրեր, ինչպէս կ'ասեն Ֆրանսացիք։ Իսկ Թունուզի խնդիրը տակաւին իւր նախապարտասական վիճակին մէջ է, բայց զանազան զրոյցներ կը պարտին։ Կ'ասուի թէ Պ. Պիսմարք Ֆրանսայի քաջալերը կը տայ թունուզը գրաւելու, որպէս զի նովաւ ըզբաղելով՝ երկար ժամանակ չկարենայ վրէժխնդրութիւն խորհիլ։ Իտալիա ալ Ֆրանսայի հետ մրցելով՝ Աֆրիկեան Տրիպոլսոյ վրայ աչք կը նետէ։ Սակայն այս զրոյցները զուտ ենթադրութիւն կ'երեւին։

* * *

Բեդրսպուրկէն Քոլոյնի կաղէթ լրագրին ուղղեալ հեռագիր մի կը հաստատէ (հանգուցեալ Ալէքսանդրը Բ. կայսեր եղբայր Կոստանդին մեծ դքսին որդի) Նիքոլա մեծ դքսին ձերբակալումն որ անցեալ երեքշաբթիէն չորեքշաբթի լուսնալու դիշերը (մարտ 24—25) կատարուեր է Սարպինոյի մէջ։

Ձերբակալեալ մեծ դուքսը Բեդրբսպուրկի մօտակայ Բաւլոսք անուն փոքրիկ քաղաքը տարուեր և անդ իւր հօրն զբօսավայրն եղած դղեակաձև պալատին մէջ դրուեր է հսկողութեան ներքև։

Հեռագիրը կ'աւելցնէ թէ ծանր պատճառներ, որք յետոյ պիտի իմացուին, սոյն ձերբակալման տեղի տուած են։ Արդէն երկու տարիէ 'ի վեր կ'ասուի թէ Կոստանդին մեծ դքսին որդին Ոչնչականութեան յարեալ է։ Այսօր ստոյգ կ'երեւի որ այդ դեռահասակ կայսերազուն մինչև իսկ վերջին դատաճանութեան մէջ մատ ունեցած է։

Կոստանդին մեծ դուքսը մի քանի օր առաջ հետեւեալ հեռագիրն ստացած էր իւր որդիէն. «Փութա՛, ե՛կ շուտով, ամենքս ալ ժողովուած եմք, քեզ կ'սպասեմք։»

Հեռագրոյս անօրէն Շնէաէր՝ այս անխոհեմ հեռագիրն ոստիկանութեան վերատեսուչ Պարանոֆի հաղորդեց, և խուզարկութիւնք լինելով, հետեւանքն եղաւ Բեդրբսպուրկի մէջ գնդապետի մի, և Սապլինոյի մէջ ալ նիքոլա մեծ դքսին ձերբակալումը։

Կ'երևի թէ նիքոլա մեծ դուքսն յեղափոխութիւն մի հանել ուզած է 'ի նպաստ իւր հօր։ Ձեռնարկ մի, որ կատարելապէս ծայրական է։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԽԱՂԱՂԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԼԻՈՅ (1)

ՁԱՐՆ ԵՒ ԿԱՐԴԻՆԱԼԸ

Երկու նոր դէպքեր հրահանգիչ դասեր կը տան Քրիստոնեայ իշխանաց և Քրիստոնեայ կղերին պատասխանատուութեանց մասին վերաբերութեամբ բռնութեան ոգւոյն։ Սոքա են՝ նախ ժամանակի սպանութիւն Ռուսիոյ Զարին, և երկրորդ, այն բողոքը զոր կարդինալ Մաննինկ (2) լրագրոյց մէջ հրատարակեց ընդդէմ բռնի ծառայութեան Կաթոլիկ քահանայից ի կարգս Ֆրանսական բանակաց։

Ըստ որում հանդուցեալ Զարն, որպէս յայտնի եղաւ ինչ ինչ նշաններէ, փափաք ցուցած էր չափաւորելու Ռուսիոյ ազնուական դասուն ծայրայեղ ինքնասիրութիւնն ու բարուց տգեղանութիւնը, տարակոյս ի ներքև կը մնայ սակայն թէ այդ սպանման սարսափելի սիրն Ազնուականաց թէ Ոչնչականաց գործն է։ Հասարակային կարծիքը բաժանեալ է այս խնդրոյն վրայ, և հաւանականաբար երկու կողմացութիւնք ալ մասնակցութիւն ունին։ Նշանակելիք կարևոր կէտն այս է որ այն ամենիշխան զինուորականութիւնը, զոր Ռուսական իշխանութիւնք և ուրիշ տէրութիւնք ա՛նքան գգուած, պաշտպանած և ընդհանրացուցած են, ահա այս կերպիւ կը միտի դառնացնել զմարդի և պատրաստել գնոտա ի կատարումն նոր կալի տիրներու, որպիսի է այն որում զոհ գնաց կայսրը։ Նորամահուան կերպը, թէև յոյժ սոսկալի, մի օրինակն էր սակայն, այն հպարտուր խեղճ զինուորաց մահուան, որք Եւրոպական ռազմադաշտերու վերայ մեռած են անհնարին տառապանաց մէջ, շնորհիւ այն սպանիչ և քանդիչ զինուց, զորս արդի գիտութիւնը կը հայթայթէ և իշխանք ու պետական մարդիկ կը քաջալերեն։ Զարը ջախջախեցաւ ձեռընկէց ռումբով մի, որ իւր երկու սրունքները խորտակեց, ի բաց առեալ մարմի մի քանի շերտերն, որոնք իւր մարմնոյն կապուած և կախուած կը մնան, մարմնոյն սարին մասերը ճեղքեց, աչքերէն մին խլեց, և արեան լճակի մի մէջ հոգեվարք թողուց զնա։ Բայց այս ապեխարշ տեսարանին բազմաթիւ օրինակներն արդէն վերջին տարիներս տեսնուեցան Քրիստոնեայ երկիրներու ռազմադաշտերուն վրայ։ Զարն ինք և իւր նախարարք սովորաբար պահած են մեծ բանակաց և ահարկու ռազմազինուց դրութիւնն, որք աւելի ընդարձակապէս այս օրինակ արդիւնքներ ի հանդէս ածելու ևթ կը ծառայեն։

Ուստի, բռնութեան ոգին, որ դաւանութեամբ քրիստոնեայ եղող իշխաններու արդի զինուորական դրութենէն այժ կը դանէ, մերթ ընդ մերթ Նեմէսիս մի կը լինի (3) նոյն ինքն իշխանաց։ Ո՛չ մի տեսակ պատիժ, որչափ ալ խիստ լինի, ոչ ալ կառափնատք, որքան ալ բազմաթիւ լինին, կրնան զսպել այդ չար ոգին։ Ընդհակառակն, խոստովինք աւելի ապահովապէս յեռաչքը. ջուրմ մի յառաջ կը բերեն։ Մարդասպանք սպանելեաց վարժ անձինք են մեծ մասամբ, և պատժական խստութեան օրինակներուն անդամ ականատես եղած են։ Այսպէս, Ուիլքս Պութ, որ սպաննեց նախագահ Լինքըլնը, մի քանի տարի առաջ Վիրճինիոյ մէջ հայրենասէր Ջոն Պրաուն կախուելը տեսած էր։ Եւ անտարակոյս, հանգուցեալ Զարն սպաննողք կատարելապէս տեղեակ էին Հէյոտէլի բաղդին, որ մօտերս Պէրլինի մէջ սպաննուեցաւ Գերմանիոյ կայսեր կեանքը դաւաճանել ուզելուն համար։ Սատանայները չեն արտաքսեր սատանայներն. և խիստ վրէժխնդրութեան չար ոգին չհալածեր կամ չ'կերպարանափոխեր եղեռնագործութեան նմանօրինակ չար ոգին։

Արդարութեան զգացումն և ամենուրեք մարդկային կեանքն յարգելու գաղափարը ժողովրդոց մէջ տարածելու նպատակաւ բարեպաշտական յարատև ջանքեր անհրաժեշտ են, որպէս զի իշխանք նոցա վրայ հաւատարմական և խաղաղասիրական տրամադրութիւններ կարենան դանել մի օր։ Ամեն տեղ բազմաթիւ բանակներու և բռնի զինուորական ծառայութեան ներկայութիւնն ընդհանուր կերպիւ մարդասպանական ոգի մ'ի հանդէս կ'ածէ, որ իւր արժանաւոր արդիւնքն ևթ կրնայ արտադրել։ Ռուսիոյ Զարին խաղաղասիրութեան և մարդասիրութեան անհատական օրինակը բոլորովին անկարող էր չեզոքացնելու իւր բանակաց և ամենատարած զինուորագրութեան անհունապէս հզօր ազդեցութիւնը։

Բայց Ռուսիոյ մէջ զինուորագրութիւնը բոլորովին ընդհանուր չէ դեռ, քանի որ Յունական եկեղեցւոյ քահանայները դուրս կը թողու։ Բայց ըստ որում այդ եկեղեցւոյ պաշտօնեայք սովորաբար քաջալերած են պատերազմական ոգին, և զգուշացած են ուսուցանելէ թէ այդ ոգին հակառակ է Քրիստոսի Աւետարանին ոգւոյն, արդեօք չէ՞ր լիներ որ իրենք ևս պարտաւորուէին մանել Ռուս բանակաց կարգը, և ամբողջապէս ճաշակել այն գործնական տառապանքը, զորս պատերազմն իւր ետևէն կը բերէ։ Եւրոպական մի մեծ տէրութիւն, Ֆրանսա, վերջերս իմաստուն օրինակ մի տուաւ այս ուղղութեամբ։ Անցեալ բաղում դարուց մէջ, Ֆրանսա սոսկալի կերպիւ վնասուած էր Կղերին իւր սրբազան պարտականութիւններէ խոտորումէն, Կղերին, կ'ասեմք, որ թէ՛ Միապետութեան, թէ՛ Կայսրութեան, թէ՛ Հանրապետութեան ժամանակ, ընդհանրապէս անգիտացած է Քրիստոսի քաղցը և խաղաղական վարդապետութիւնները և անձնական օրինակն՝ ի մասին մարդկային կենաց սրբութեան։ Մինչև ցայսօր, որոշապէս խաղաղական վարդապետութիւն մի դեռ յանկինը չէ եղած Հռոմէական կղերին, և այս մասին բացառութիւն չեն Յունական, Լուտերական և մեծ մասամբ նաև Անգլիական կղերը։

Արդ, եթէ պատերազմն այսչափ արդարանալի է, եթէ սուրն այսչափ սուրբ է, եթէ բանակներն այսքան արժանիք ունին Եկեղեցւոյ հաւանութեան, թո՛ղ այսուհետև ա՛չ մի երկրի մէջ կղերն ազատ չլինի դործնականապէս մասնակցելէ այն ծառայութեան՝ որ այսչափ դովելի կը թուի իրեն։ Անգլիական առած մի կ'ասէ թէ «ինչ որ համեմ է էգ սագին համար, համեմ է նաև արու սագին համար։» Եւ այս առածը լաւ կը պատշաճի քահանայական ծառայութեան ի կարգս բանակաց։ Եթէ քահանայք զինուորական պարտականութիւններ կը քարոզեն, թող գոծդբեբեալ տարի իրենց ինչ որ կը քարոզեն, Ֆրանսա, այդ մեծ ազգը, վերջին տարիներս նշանաւոր յառաջդիմութիւն մի ցուցած է գործնական իմաստութեան և գործադրական ճարտարութեան մասին։ Ազնուն փ ութաջանութեամբ մըշակած է իւր ազգային զօրութեանց աղբիւրներն և իւր ճշմարիտ շահերն, և իւր նախնի զինուորական «փառաց» խաբուսիկ երազներուն յիմարութիւնը մեծապէս զգացած է։ Բայց իւր մեծապէս ուշմութեան ամենահիշող նշաններն մին ալ վերջերս հաստատած օրէնքն է, որով Ֆրանսական բանակաց կարգին մէջ քահանայից ալ ծառայութիւնը պարտաւորիչ կը լինի այսուհետեւ։

Եւ ահա կարդինալ Մաննինկ, Ջըրանդքին այս կողմէն, (Անգլիայէն) սարսափանաց և սիգանաց ազազակ մի կը բառնայ այդ օրէնքին դէմ։ Ցիսուսի կրօնին սուրբ քահանայներն ու առաքեալները միթէ՞ պիտի ենթարկուին զինուորական ծառայութեան բարոյականապէս «մահարեր» ազդեցութեանց, ինչպէս հիմա կը հաշակէ Կարդինալն։ Եւ կը բացագանչէ. «Ով որ գիտէ թէ ի՛նչ են բանակներն, — չեմ ասեր թէ ի՛նչ է Ֆրանսական բանակն, — և ի՛նչպիսի կեանք է զօրանոցներու և պահականոցներու կեանքն, և բանակաց ընկերական սովորութիւններն, բացատրութեան չպիտի կարօտի համոզուելու համար թէ այժմ բանակաց մէջ ապրիլը քահանայից համար պարտաւորիչ հրատարակելով, Ֆրանսա առաքելական ոգւոյն «տարբանեռուն վրայ կը դնէ տապարը»։ Բայց ինչո՞ւ համար Հռոմէական կղերն, և ուրիշ եկեղեցեաց պատկանող իւր վերապատուելի եղբարքն, այնչափ լռութիւն կը պահեին զինուորականութեան այդ բարոյապէս «մահարեր» և «հիմնովին» աւերիչ միտման դէմ, մինչև որ, առաջին անգամ լինելով, իրենց համահաւատար ազգակիցներուն հանրական բեռէն մի փոքր մասն ալ իրենց ուսերուն վրայ դնելու որոշում արուեցաւ։ Ո՞ւր էին մինչև հիմա։

Արդ, Կարդինալին սոյն բողոքն անկեղծապէս խաղաղութեան փափաքող միւս բոլոր ազգաց և իշխանաց համար մեծ քաջալերութիւն պէտք է լինի հետևելու Ֆրանսայի օրինակին, և նոյնպէս կղերական դասը պարտաւորելու որ իւր բարոյական ինք ի գործ դնէ (զինուորական ծառայութեան մասնակցելով)։ Եթէ այս դրութեան լոկ ընկերութիւնն այսպիսի նշանաւոր և ընտիր արդիւնք կ'ունենայ, և թէպէտ առաջին անգամ լինելով Կարդինա՛լ մի կը պարտաւորէ բացայայտապէս հնչակելու զինուորական կեանց չարիքներն, ասա՛ մ'ոչափ փառաւոր արդիւնքներ կրնամք սպասել, երբ այդ զինուորական կեանքն ընդհանրապէս կղերին համար ալ պարտաւորիչ հրատարակուելով, կղերական դասն ամբողջապէս դարձի գայ և խաղաղասիրական դպատարաց փոստաբան կանգնի։

Տարիներէ ի վեր, մարդասէրք և իմաստասէրք կ'ողբային այն անհնարութեան և լռութեան վրայ՝ զորս քրիստոնեայ կղերը ցոյց կը տար պատերազմին չարեաց առջև։ Բայց իմաստունն Ֆրանսա ցուցուց ի վերջոյ թէ այդ չարիքին դարմանումն ալ Գոլգոթայի հաւէքիական ծանօթ խնդրոյն լուծման չափ պարզ և դիւրին է։ Ուստի, ջերմեռանդօրէն մաղթելի է որ, քահանայները մասնակից անելով այն պատերազմին տառապանաց զոր ցարդ կա՛մ դրապէս կա՛մ լռութեամբ կը քաջալերէին, ամբողջ կղերական դասը խաղաղութեան ջատագովներու դարձնելու բարի գործն՝ ա՛չ միայն իւր ամբողջութեամբ կատարուի և չարունակուի Ֆրանսայի մէջ, այլ նոյն օրէնքն հաստատուի նաև ուրիշ երկիրներու մէջ, մասնաւորապէս ի Գերմանիա, ի Ռուսիա և յԱւստրիա։

Արդ, երբ կղերը մեծ մասամբ գործնականապէս զգայ այն ահարկու դրութեան արհաւիրքն, որոյ չնորհիւ պայթուցիկ ռումբեր կը նետուին ա՛չ միայն անհատական կայսեր մի վերայ, այլ մարդկային ցեղէն բիւրաւոր անհատից վերայ, որոց համար ևս մեռած է մեր Դիտած Տէրն ու Փրկիչը, յայնժամ։ և զուցէ ա՛չ մինչև այն ժամանակ, Քրիստոնեայ ազգաց կրօնական պաշտօնեայներն անուշադիր պիտի արթննան և զգան իրենց պարտականութիւններն այս մեծ խնդրոյն նկատմամբ, ինչպէս նաև իրենց մասնաւոր պատասխանատուութիւնները բոլոր այն պատերազմաց և մինչև իսկ սպանութեանց համար, որք մինչև ցարդ աշխարհի պատուհասն եղած էին։

ԲԺԻՇԿ ԵՒ ՓԱՍՏԱԲԱՆ

Հայաստան աշխարհն ազգային, կրթական և տնտեսական տեսակէտներով բարենորոգելու համար նոր տարրեր պէտք է մտցուն։ Արդէն, բարենորոգելու համար ո՞ւ է երկիրը, որ դարուս պահանջումներէն ետ մնացած է, նոր տարրեր պէտք է մտցուն։ Բարենորոգելի երկիրները կրնամք թերևս նմանցուն այն տեսակ հիւծեալ մարմիններու, որոց մէջ դուրսէն տարիւն կը մտցուն նոր կեանք տալու համար։ Այս օրինակն յոյժ կը պատշաճի մեր հայրենի երկրին։ Ջեռնհաս ուսուցիչներ, գիտական առողջ դատողութիւն, բարոյ տէր անհատներ, «գտակար գիրքեր, ճարտար արհեստաւորներ, դրամագլուխներ, մատնագէտներ, նոր մեքենայներ, — սոցա ամենն հարկաւոր են լուսաւորելու և հարստացնելու համար Հայաստանն, և տարակոյս չ'կայ որ երբ միտքերը խաղային, երկիրն հանդարտի, և կառավարական բարւոքմունք սկսին իրարու յաջորդել, միայն այդպիսի միջոցներով նոր կեանք պիտի կրնայ տրուիլ այդ երկրին։

Բայց առ այժմ, որպէս կը թուի, երկիրն աւելի ստիպողական կերպիւ պէտք ունի մի ուրիշ տեսակ նոր տարրի։ Այն երկիրն որ երեկ հայի սովէն կը տառապէր, որ միշտ տգիտութեան սովէն կը տառապի, այժմ երրորդ տեսակ սով մի ունի, որ միւս երկուքին չափ աղիտաբեր լինել կ'սպառնայ, և արդէն սկսած է լինիլ։ Բժիշկ չ'կայ Հայաստանի մէջ, փաստաբան ալ չ'կայ։ Որպէս կը յիշուի, անցեալ օր մեր թերթին մէջ տպուեցաւ Արապկիրէն գրուած նամակ մի, որ բժիշկի սովը կը գուժէր։ մեր պատուական Ռ—ը—ն ալ կարծես պէս մի կարեւոր և վաճառաշահ քաղաքի մէջ, ուր ընդարձակ գործեր կը լինին, փաստաբանի պակասը կը զգեցուցանէր երկու շաբաթ առաջ, և ուշադրութիւն հրաւիրելով այն մասնաւոր ընդունելութեան և յաջողութեան վրայ, զոր կը վայելէր այժմ Կարին գտնուած Գ. փաստաբան մի, Կ. Պոլսոյ Հայ փաստաբաններուն անուղղապէս կ'առաջարկէր իրենց գործունէութեան նոր դաշտ մի փնտռել Հայաստանի գլխաւոր քաղաքաց մէջ, ուր մեծ պէտք կայ իրենց։

Այս երկու ընտիր արուեստներուն — բժշկութեան և փաստաբանութեան — հետևող Հայ երիտասարդաց թուոյն բազմանալը տեսնելով, ոմանք կ'առարկեն թէ վերջապէս սոքա եւս իրենց արժէքը պիտի կորուսանեն Կ. Պոլսոյ մէջ, քանի որ ընդհանուր է առեւարբական այն օրէնքը թէ ինչ որ առատ է, ժան կը լինի, այսինքն կը կորուսանէ իւր առջի արժէքը։ Բայց ա՛հա գործունէութեան նոր դաշտեր կը բացուին մեր — առաւելապէս երիտասարդ — բժշկաց և փաստաբանից առջև։ Կարնոյ, Վանայ, Բաղէշի, Մշոյ, Տիարպէքիրի, Քարբերդի, Ակնայ, Երզնկայի և այլ քաղաքաց մէջ բժշկելիք շատ հիւանդներ, պաշտպանելիք շատ դատեր պիտի գտնեն, և հաւանականապէս, բաւական լաւ պիտի վարձատրուին՝ մի և նոյն առևտրական կանոնին զօրութեամբ։

Հայաստանէն ազատալի լուրեր կը դան այլ և այլ հիւանդութեանց գործած նախճիրներուն վրայ։ Ժողովուրդը բնաւ տեղեակ չէ առողջապահիկ կանոնաց։ Չկան մասնագէտք՝ որք այդ մասին հսկողութիւն ի գործ դնեն։ Խեղճ հիւանդութիւնք, շատով կը փոխուին ծանր հիւանդութեանց, և այժմ Սովերոց Յանձնաժողովին ըստացած տեղեկագրերը կ'ապացուցանեն, դժբաղդաբար, թէ Հայաստանի մէջ հիւանդութեանց պատճառաւ մեր ազգայնոց ըրած կորուստներն աւելի մեծ եղած են՝ քան թէ նոյն իսկ սովու պատճառաւ նոցա ունեցած կորուստները։

Նաև, Հայաստանի ժողովուրդը միշտ դատեր ունի, որոց մէջ երբեմն մեծ շահեր կը գտնուին, և յաճարակամ կը յանձնէր զայնս ձեռնհաս փոխանորդներու, եթէ այդ տեսակ արարածներ կենային Թուրքիոյ այդ հեռաւոր կողմերը։ Նոր բան մի չեմք իմացներ մեր ընթերցողաց՝ յայտնելով որ ի յոգոյէ փաստաբաններ, շատեր շատ անգամ կը կորուսանեն իրենց արդար դատերն, և գիտեմք թէ սոցա կարդէն են նաև բազում հողային դատեր, որք թերեւս անհատական խնդիրներէ աւելի կարեւոր խնդիրներ են։

Այս հիւանդութիւնները դարմանելու, այս դատերը պաշտպանելու համար բժիշկներ և փաստաբաններ պէտք են։ Մեք որ (դպրոց տէր անհատներ, «գտակար գիրքեր, ճարտար արհեստաւորներ, դրամագլուխներ, մատնագէտներ, նոր մեքենայներ, — սոցա ամենն հարկաւոր են լուսաւորելու և հարստացնելու համար Հայաստանն, և տարակոյս չ'կայ որ երբ միտքերը խաղային, երկիրն հանդարտի, և կառավարական բարւոքմունք սկսին իրարու յաջորդել, միայն այդպիսի միջոցներով նոր կեանք պիտի կրնայ տրուիլ այդ երկրին։

Բայց առ այժմ, որպէս կը թուի, երկիրն աւելի ստիպողական կերպիւ պէտք ունի մի ուրիշ տեսակ նոր տարրի։ Այն երկիրն որ երեկ հայի սովէն կը տառապէր, որ միշտ տգիտութեան սովէն կը տառապի, այժմ երրորդ տեսակ սով մի ունի, որ միւս երկուքին չափ աղիտաբեր լինել կ'սպառնայ, և արդէն սկսած է լինիլ։ Բժիշկ չ'կայ Հայաստանի մէջ, փաստաբան ալ չ'կայ։ Որպէս կը յիշուի, անցեալ օր մեր թերթին մէջ տպուեցաւ Արապկիրէն գրուած նամակ մի, որ բժիշկի սովը կը գուժէր։ մեր պատուական Ռ—ը—ն ալ կարծես պէս մի կարեւոր և վաճառաշահ քաղաքի մէջ, ուր ընդարձակ գործեր կը լինին, փաստաբանի պակասը կը զգեցուցանէր երկու շաբաթ առաջ, և ուշադրութիւն հրաւիրելով այն մասնաւոր ընդունելութեան և յաջողութեան վրայ, զոր կը վայելէր այժմ Կարին գտնուած Գ. փաստաբան մի, Կ. Պոլսոյ Հայ փաստաբաններուն անուղղապէս կ'առաջարկէր իրենց գործունէութեան նոր դաշտ մի փնտռել Հայաստանի գլխաւոր քաղաքաց մէջ, ուր մեծ պէտք կայ իրենց։

Այս երկու ընտիր արուեստներուն — բժշկութեան և փաստաբանութեան — հետևող Հայ երիտասարդաց թուոյն բազմանալը տեսնելով, ոմանք կ'առարկեն թէ վերջապէս սոքա եւս իրենց արժէքը պիտի կորուսանեն Կ. Պոլսոյ մէջ, քանի որ ընդհանուր է առեւարբական այն օրէնքը թէ ինչ որ առատ է, ժան կը լինի, այսինքն կը կորուսանէ իւր առջի արժէքը։ Բայց ա՛հա գործունէութեան նոր դաշտեր կը բացուին մեր — առաւելապէս երիտասարդ — բժշկաց և փաստաբանից առջև։ Կարնոյ, Վանայ, Բաղէշի, Մշոյ, Տիարպէքիրի, Քարբերդի, Ակնայ, Երզնկայի և այլ քաղաքաց մէջ բժշկելիք շատ հիւանդներ, պաշտպանելիք շատ դատեր պիտի գտնեն, և հաւանականապէս, բաւական լաւ պիտի վարձատրուին՝ մի և նոյն առևտրական կանոնին զօրութեամբ։

Հայաստանէն ազատալի լուրեր կը դան այլ և այլ հիւանդութեանց գործած նախճիրներուն վրայ։ Ժողովուրդը բնաւ տեղեակ չէ առողջապահիկ կանոնաց։ Չկան մասնագէտք՝ որք այդ մասին հսկողութիւն ի գործ դնեն։ Խեղճ հիւանդութիւնք, շատով կը փոխուին ծանր հիւանդութեանց, և այժմ Սովերոց Յանձնաժողովին ըստացած տեղեկագրերը կ'ապացուցանեն, դժբաղդաբար, թէ Հայաստանի մէջ հիւանդութեանց պատճառաւ մեր ազգայնոց ըրած կորուստներն աւելի մեծ եղած են՝ քան թէ նոյն իսկ սովու պատճառաւ նոցա ունեցած կորուստները։

Նաև, Հայաստանի ժողովուրդը միշտ դատեր ունի, որոց մէջ երբեմն մեծ շահեր կը գտնուին, և յաճարակամ կը յանձնէր զայնս ձեռնհաս փոխանորդներու, եթէ այդ տեսակ արարածներ կենային Թուրքիոյ այդ հեռաւոր կողմերը։ Նոր բան մի չեմք իմացներ մեր ընթերցողաց՝ յայտնելով որ ի յոգոյէ փաստաբաններ, շատեր շատ անգամ կը կորուսանեն իրենց արդար դատերն, և գիտեմք թէ սոցա կարդէն են նաև բազում հողային դատեր, որք թերեւս անհատական խնդիրներէ աւելի կարեւոր խնդիրներ են։

Այս հիւանդութիւնները դարմանելու, այս դատերը պաշտպանելու համար բժիշկներ և փաստաբաններ պէտք են։ Մեք որ (դպրոց

մէ զատ) ամէն ինչ առատօրէն կը գտնէր Պոլսոյ մէջ, բժիշկներ և փաստաբաններ ալ առատօրէն ունինք։ Բայց Ասիական Թուրքիոյ այդ մասերուն մէջ սոքա իրենց բացակայութեամբ կը փայլին, ուստի օրչափ պիտանի, նոյնչափ յարգի են անոնք։ Մեր փափաքն է՝ աշխատութեան այդ նոր ասպարէզին վերայ ուշադրութիւնն հրաւիրել Հայ բժշկաց և փաստաբանից, մանաւանդ այն կարգին որ աշխատութեան այսպիսի նոր ասպարէզներ ընտրելու մասնաւոր դիւրութիւններ ունի։ Այն իրաւունքներն, որոց վերայ հաստատեալ է մեր այս առաջարկը, թո՛ղ իրենք անձամբ քննեն, ստուգեն, և երբ ճիշդ դըտնեն, թո՛ղ իրենց շահերուն համեմատ գործեն յանձամ։ Մեք այս առաջարկը լոկ ազգասիրական նըպատակով մի չեմք ներկայեր, այլ զլխաւորապէս նիւթական, առևտրական նպատակաւ, իբրև շահու աղբիւր, յորմէ երկու կողմն ալ — թէ՛ Հայաստանցին և թէ՛ Պոլսեցի բժիշկը կամ փաստաբանը, — կըրնան օգտիլ մեծապէս։

Այս տեսութեամբ կ'ասեմք Հայ բժշկաց և փաստաբանից որ Հայաստան երթան ... զի անդ պիտի գտնեն բժշկելի ամենամեծ հիւանդութիւնները, պաշտպանելի ամենարդար դատերը։ ԲԻԻԶԱՆԴ։

ԳՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ Մ'Ի ՄԻՆՈՍ ՁԵՐԱԶԷ ԵՒ ԱՌԱՋԱՐԿ Մ'Ի ԳՐԱՍԷՐ ԱՏՈՄԷ

(ԱՌ ՊԱՐՈՆ ՁԻՎԱՆ, *խմբագիր ի Լայս։ —Վիքդօռ Իւկօի Էշուն վրայ գրելու համար՝ հարկադրուած եմ սպասել որ այդ դրքին ժողովրդական տըպագրութիւնն երևայ։ Այսօր ի լոյս կ'ընծայեմ հետագայ նամակն, ուր Մինաս Ձերազ հաստատած մ'ընդօրինակած է Աշան Տերէ՛ի բանաստեղծին վերջին գործէն։ Հաստատած զոր ես ալ կ'ընդօրինակեմ միայն, խնդրելով Հայ Իւկօէն որ հաճի հրատարակել Մասիսի մէջ այն վեհ հաստատոյն թարգմանութիւնն։*)

Ա.

ՆԱՄԱԿՆ

Լէնտըն, 16/28 Հոկտ. 1880.

«Սիրելի եղբայր.

